Դժոճ է կեանքը Հայաստանի գիւղական համայնքներուն մէջ, եւ այս վիճակը փոխելու, գիւղացին, անոր աշխատանքը, անոր արտադրանքը, արժեքապատիւ կեանք ապահովելու համար անոր թափած ճիւղը արժեւորելու, հունաւորելու, գիւղացիական գանդուածը կազմակերպելու, անոր ինքիւնը յստակացնելու ու զանազան յանգրգիւններով վարելու ու անոնց վերամշակուած արտադրութիւններու սպառումը կազմակերպելու:

տէր չունի: Զարմանալի երեւոյթ է այս մեր ժողովրդավարական հասարակարգին մէջ, ուր ընտրութիւններու ատեն ահազայիս իրարանցում կը ստեղծուի, ուր տարբեր մակարդակի ու կուսակցութեանց թեկնածուներ գիրար կը հրմշտկեն, բոլոր գիւղերու ցեխոտ ու փոշոտ ճամբաները կը չափեն ու գիւղացիին սիրաշահեալու, անոր քուէն ապահովելու ջանք ու ճիգ կը թափեն, աւելի ճիշդը՝ քիչ մը սերմնացու, քիչ մըն ալ դրամ կը բաշխեն, կը նուաստացնեն տնտեսական խեղճութեամբ տառապող շինականը ու իրբեւ թէ՛ յաղթական՝ կը հեռանան մինչ յաջորդ ընտրութիւն:

Հայաստանի քաղաքական կուսակցութիւններէն տակաւին ոչ մէկը չէ յաջողած կամ շատեր նոյնիսկ չեն ալ փորձած դառնալ գիւղացիական բնակչութեան խօսնակը, անոր շահերուն ու իրաւունքներուն պաշտպանը:

Իմ կուսակցութիւնս որոշ ճիգ մը կատարած է այդ ուղղութեամբ, որուն իրբեւ արդիւնք՝ այսօր կան բազմաթիւ գիւղեր, ուր գիւղացիներու ընտրուած են դաշակընտան մարդիկ: Սակայն կատարուած աշխատանքը տակաւին շատ հեռու է բաւարար նկատուելէ: Ցատակ կարիք կայ հարմարելու գիւղացիութիւնը, քաղաքական ուժ զանգնելու գայն:

Քաղաքական այդ ուժը, որ իմ նախընտրութեամբ կրնայ ըլլալ Հայ Թեղափոխական Դաշակցութիւնը, պէտք է ամուր քաղաքներ ստեղծէ պետական միջոցներն ու միջազգային օժանդակութիւնները արդարօրէն բաշխելու, աղէտեալ շրջաններուն շտապ օգնութիւն հասցնելու, գիւղատնտեսական զարգացման համար նախապայման ենթակառուցող կարելի արագութեամբ իրականացնելու, նպատակասլաց ու մատչելի տոկոսներով վարկեր ապահովելու, գիւղատնտեսական միջոցներուն ու անոնց վերամշակուած արտադրութիւններու սպառումը կազմակերպելու:

Դժուար է գիւղացիին վստահութիւնը շահիլ: Ան ընդհանրապէս շատ կասկածոտ է, վերապահ: Գիւղացիները կազմակերպելի փորձերը պէտք է նկատի ունենան այդ ու իրենց անհաշահաբերութեամբ գրաւեն անոր սէրն ու նեցուկը: Այս գործը գոհողութիւն կը պահանջէ, սակայն ի վերջոյ այդ գոհողութիւնը կը վարձատրուի Հայ գիւղացին դարձնելով տէր իր հողին, տէր անոր բարիքներուն, աւելի քիչ նաեւ անոր ցաւերուն:

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՑԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ԿԱՆԱԶԱՊԱՏԵՅ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ



Ընդառաջելով Հայ կարողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն վարժարանի տնօրէնութեան խնդրանքին, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի հանրօգուտ աշխատանքներու բաժանմունքի աշխատակիցները 7 Ապրիլին ծառատնկում կատարեցին վարժարանի մանկապարտէզի շրջափակին մէջ:

Մեսրոպեանի տնօրէնութիւնը շնորհակալութիւն յայտնեց բաժանմունքի վարիչներուն, մեր քաղաքի եւ Մեսրոպեանի պոփկներուն համար խիտ օգտակար կանաչապատման այս ձեռնարկը արագօրէն եւ ձեռնհասօրէն իրականացնելու համար: Տնօրէնութիւնը շնորհակալութիւն յայտնեց նաեւ քաղաքապետարանի Անդրաբնիկ Մարտիանին, որ վարժարանի խնդրանքին ընծայեց իյ սնունդական ուշադրութիւնը:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ Հայ Կար. Մեսրոպեան Բարձր. վարժարանի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Կամք»ի լոյս ընծայումը համացանցի վրայ արտայայտութիւնն է նոր ուղղութեան մը, գոր Արեւմտեան Եւրոպայի Հայ Զեղափոխական Դաշակցութիւնը կ'առաջադրէ՝ 21րդ դար մուտք գործելով:

Ժամանակաշրջան մը, որ կը յատկանշուի համաշխարհայնացման հոլովոյթով եւ միաբեւեռ աշխարհակալութեան կազմաւորման գործընթացով, ապագային եւ միատարաբ բնոյթով, վտանգելով ժողովուրդներու մշակութային ինքնութիւնը եւ նոյնիսկ՝ առողջական եւ ֆիզիքական վիճակը: Ժամանակաշրջան, երբ կայսերապաշտութիւնը, օգտագործելով իր գերակայ հզօրութիւնը, ֆինանսական, նորագոյն արհեստագիտական թէ՛ ուղղութեան բիրտ ուժի միջոցներով կը փորձէ մեր մոլորակին պարտադրել իր միատարաբ եւ միահեծան «Նոր աշխարհակարգը»:

Ժամանակաշրջան, երբ բնական հարստութիւններու տէր ժողովուրդներ կը տառապին սովահար եւ տարատեսակ հիւանդութեանց գերութեան մէջ՝ գրկուած մարդկային գարգացման նոյնիսկ տարրական հնարաւորութիւններէն: Միւս կողմէ, արհեստագիտութեան նորագոյն միջոցներով օժտուած, տնտեսապէս բարգաւաճ երկիրներու ժողովուրդներ տարաբնոյթ հակասութիւններով ուռնացած, սակայն մարդկային կեանքի էութեան պարպուող՝ բթացումի ու արժեքային համակարգի փտախոր կ'ապրին եւ իրենց այդ գոյավիճակով իսկ կ'երաշխատեն կայսերապաշտութեան դժամ, բայց ոչ յաճախ անմիջականօրէն տեսանելի համակարգի գոյատեւումը:

Այսուհանդերձ մենք ակնհայտ եմք նաեւ մարդկային գիտակցութեան, արժանապատուութեան եւ անարարութեան դէմ ըմբոստացման արտայայտութեան, ընդվզումներու եւ մարդկային ազգի արժեքները դրսեւորող ընկերային շարժումներու, որոնք համաշխարհային ծաւալ ստացած են նոյնիսկ նորագոյն արհեստագիտութեան միջոցներու օգտագործմամբ:

Արդի արհեստագիտութեան միջոցներու օգտագործմամբ Հ. Յ. Դաշակցութիւնը եւրոպական միջավայրի մէջ իր հաղորդակցութեան նորագոյն ցանցը կը հաստատէ, աղբիւրներ կը կերպով, կազմակերպելու համար օրըստօրէն ուռնացող Եւրոպայի հայ համայնքները: Արեւմտեան Եւրոպայի Կեդր. Կոմիտէն իր առաջին քայլը կ'առնէ այս ուղղութեամբ «Կամք»ի լոյսը տարածելու արտադրութեամբ:

Ահաւասիկ այսպիսի պայմաններու մէջ հայ ժողովուրդի եւ Հայաստան աշխարհի ամբողջական ազատագրութեան, հայրենի պետութեան անկախութեան ամրապնդման, ընկերային արդարութեան եւ բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում պարող ընկերային կառուցով ամրապնդում հզօր հայրենիք կերտման ձգտումով, Յեղասպանութեան ոչ միայն ճանաչումը ապահովելու, այլեւ անոր ծանր հետեւանքներու պատմական սրբագրութիւնը իրագործելու հետամուտ, ինչպէս նաեւ տարափոխ հայութեան շարքերու անհակազուրի օրըստօրէն աճը ղեկավարելու եւ ներկայ մտահոգիչ հոսանքից դրական ուղղութիւն տալու ծանր պատասխանատուութիւնը ստանձնած է Հայ Զեղափոխական Դաշակցութիւնը ընդհանրապէս: Իսկ այս ուղղութեամբ եւ այս պարագային Արեւմտեան Եւրոպայի կեդրոնական կոմիտէներու իր գործունէութեան շրջագծին մէջ որդեգրած նոր ուղղութեամբ անհրաժեշտաբար ձեռնարկեց «Կամք»ի վերահրատարակութեան, ելեկտրոնային տարբերակով, որ ոչ միայն անհամեմատ աւելի լայն եւ հազարաւորներու բազմութեան ընթացման առարկայ պիտի ըլլայ, այլ օրըստօրէն ուռնացալու յանձնարարութեամբ բազմապիսի արդի հնարարութիւններ պիտի ստեղծէ, մասնաւորաբար ընկալման նորագոյն հնարարութիւններով:

Այսպիսի միջավայրի մէջ մենք յանձնառու կը դառնանք հայ գաղութները հաղորդակից եւ մասնակից դարձնելու ոչ միայն ազգային մասնագնաց ոլորտներուն, այլեւ՝ գայն հաղորդակից դարձնելու միջազգային յառաջադէմ եւ ազատատեղ շարժումներուն, հոգեմտաւոր բազմակողմանի թռիչքներով ու աշխարհընկալման արեւելումով:

Այս նախաբանէն սեկնելով՝ պարբերաբար եւ որոշակիօրէն ոչ միայն կը լուսաբանենք մեր մօտեցումները, այլ կ'առաջադրենք այլընտրանքային նպատակաւոր մօտեցումներ, արժարժուած հարցերու ուղղութեամբ, առ ի քննարկում եւ ազատ մտքի փոխանակում:

«ԱՉԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգայն»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունքը հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻՆԻ ԺԱՄԸ 5:00:

ՄԱՀԱՉԳԻՆԵՐԸ բացառութիւն է: Մահագոյ կ'ընդունուի սինչել ու զիշեր, այնքան առնել որ գայն հրատարակելու հնարարութիւն կայ:

PHOTO NERSES
(Արագ սպասարկութիւն - որակաւոր լուսանկարներ)

ՀԻՄՆԱԳՐՄԱՆ
25 ԱՄԵՆԱԿԻ ԱՌԻԹՈՎ
36 photo ֆիլմի
նկարահանումը
միայն 8,000 Լ. Ո.

(Kodak Royal քարտի վրայ տպուած եւ արդիական DIGITAL մեքենայի միջոցաւ) ... ԵՒ USA95E ՆԱԿԻ
Լուսանկարի նոր ֆիլմ մը + ալպոմ մը + Գկարի INDEX մը

Կը նկարենք փոքրերու լուսանկարներ 2ԱՏԿՈՒՄՍ յատուկ յարդարանքով

PHOTO NERSES: Պուրճ Համուտ, Քաղաքապետարանի փողոց «Սանքըր ԱՐԻՆ»ի դիմաց:
Տեղ. 01 - 261858 եւ 01 - 255992

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐՈՒՆ

Առաջարկներ ունի՞ք: Սոր գաղափարներ: Շատ լաւ: Ձեր Ե-ճամակները դրկեցե՞ք voicevan@inco.com.lb հասցէին:

«ԱՂԲԱԼԵԱՆ - Հ.Մ.Ը.Մ.»
ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ
Շաբաթ, 12 Ապրիլ 2003ին կը սկսին
KUNG FUի մարզումները՝
տարիքային բաժանումներով:

Մանրամասնութեանց համար դիմել համալիրի տնօրէնութեան, հեռ. 04 - 722902 - 3 թիւերուն:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՐԳԵՐ

Լիբանանեան կեանքի երեւոյթներ

ԻՆՔՆԱՇԱՐԺՆԵՐՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՏՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԱԲ 5 ԱՊՐԻԼԻՆ

ՈՐՈՇՈՒՄԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՔԱՆԻ ՄԸ ՆԱԽԳՐՈՒԹՅՆԵՐՈՎ

5 Ապրիլին ի գորու դարձաւ ինքնաշարժներու պարտադիր ապահովագրութեան նոր օրէնքը, որ առաջին հերթին Լիբանանի մէջ շրջող բոլոր ինքնաշարժներուն համար կը պարտադրէ ապահովագրութիւն ունենալ:



Ներկայիս կարգ մը ինքնաշարժ վարորդներուն մօտ եղած ապահովագրութիւններուն մեծամասնութիւնը արկածի մը պարագային կը հոգայ եղած նիւթական եւ ֆիզիքական վնասները, սակայն՝ իւրաքանչիւրին համար առանց յստակ չափանիշ մը կամ նիւթական շտապ սահման մը որդեգրելու: Նոր որոշումով տնտեսութեան նախարարութիւնը յստակացուց, թէ ապահովագրութեան մէջ պէտք է յստակօրէն նշուի, որ ֆիզիքական եւ նիւթական վնասներու պարագային ընկերութիւնը պիտի հոգայ նուազագոյն սահմանուած տոկոսը: Պետութեան կողմէ ճշդուած եւ յստակացուած սակագրոյցը 60 հազար Լ ոսկիէն 90 հազար Լ ոսկի է, որ միայն արեան գիրք կ'ապահովագրէ նոր պայմաններով:

Նախկին որոշումով ապահովագրութեան ընկերութիւնը կրնար խուսափիլ ֆիզիքական վնասներուն ծախսերը փակելէ, եթէ արկածի մը պարագային վարչը չզտնէր իրեն օգնող մը: Կային նաեւ պարագաներ, որոնք կը ստիպէին արկածը կատարողին եւ կամ վիրաւորներուն օգնողներուն, որ հոգան ծախսերը:

Նոր որոշումով այդ պարագաներուն առջը առնուած է եւ անօրինական որեւէ երեւոյթի չզոյւլութեան պարագային ընկերութիւնը ստիպուած է հոգայ ծախսերը: Նախկին որոշումին համաձայն, պարտադիր ապահովագրութեան ազգային ընկերութիւնը ստիպուած է հոգայ որեւէ լիբանանացի կամ գրօսաշրջիկի ֆիզիքական վնասները, եթէ արկած պատճառողը փախուստ տայ եւ անոր ինքնութիւնը անյայտ մնայ: Ըստ պատասխանատուներուն, այս պարագային ընկերութիւնը կը ստիպուի հոգայ Լիբանանի մէջ առանց ապահովագրութեան շրջագայող եւ կամ ցամաքի ճամբով Լիբանան մտած ու շապահովագրուած չուրջ 700 հազար ինքնաշարժներուն պատասխանատուութիւնը, ինչ որ կը նշանակէ, թէ անիկա ստիպուած է հոգայ լու պատահած բոլոր արկածներու ծախսերը ընդհանրապէս: Նոր որոշումով այս պարագաները ընկանաբար պիտի նուազին, որովհետեւ բոլոր ինքնաշարժները պարտադիր ապահովագրութիւն պիտի ունենան եւ անոնց ընկերութիւնները պիտի փակեն իրենց արկածներուն վնասները:

ԻՆՔՆԱՇԱՐԺՆԵՐՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՏՈՎԱԳՐՈՒԹՅՆԵՐՈՎ

Ապահովագրութեան համաձայնութիւն կը գոյանայ, երբ քաղաքացի գումարի մը փոխարէն ապահովագրութեան ընկերութեան մը հետ համաձայնի, որ այս վերջինը հոգայ անոր կատարած արկածներուն պատճառով արձանագրուած ֆիզիքական եւ նիւթական վնասները, նկատի ունենալով հետեւեալ պայմանները:

- Ընկերութիւնը դիմացի ինքնաշարժին նիւթական եւ անոր մէջ գտնուող անձերուն ֆիզիքական վնասներուն ծախսերը կը հոգայ, եթէ ինքնաշարժը կը վարուի ինքնաշարժի տիրոջ կամ անոր համաձայնութեամբ ունի այլ անձի կողմէ:

- Ֆիզիքական վնասներուն մէջ նկատի կ'առնուի մանուան պարագան կամ ֆիզիքական որեւէ վնաս, որ կը յառաջանայ հրդեհի կամ պայթումի պատճառով: Նիւթական վնասներուն մէջ նկատի կ'առնուին ամէնէն փոքր վնասներէն մինչեւ մեծագոյն արկածները:

- Ընկերութիւնը որեւէ պարագայի չի հոգար որոշուած բարձրագոյն գումարէն աւելի վնասներուն ծախսերը, եւ ենթակառ ոչ մէկ ձեւով կրնայ պահանջներ ներկայացնել:

- Այս համաձայնագրի մէջ չ'օգտուիր ինքնաշարժին տերը, եթէ որեւէ արկած պատահի ինքնաշարժին եւ կամ իրեն, ինչպէս նաեւ չեն օգտուիր անոր ինքնաշարժը վարող այլ անձերը, ինքնաշարժի մէջ եղող իր ազգականները եւ կամ ընտանիքի անդամները:

- Արկածի մը պարագային ենթակառ պէտք է լուր տայ ապահովագրութեան ուժերուն, որպէսզի արձանագրեն արկածին մանրամասնութիւնները եւ կանչեն մասնագէտ մը:

- Անմիջապէս տեղեակ պահել ապահովագրութեան ընկերութիւնը առաւելագոյնը երեք օր առաջ:

- Ապահովագրութեան ընկերութեան յանձնել փաստաթուղթերն ու արկածին վերաբերող մանրամասնութիւնները:

- Ապահովագրութեան անձը իրաւունք ունի բողոքելու ապահովագրողին դէմ, եթէ այս վերջինը ձգտէ հարցին լուծումը:

- Ապահովագրողը կրնայ բողոքել ապահովագրողին դէմ, եթէ ան չ'վճարէ իր պարտաւորութիւնները:

Լիբանանի ապահովագրութեան ընկերութիւններու խորհուրդը սկսած է աշխատանքի, որպէսզի օրինազանց միջոցներով այս որոշումը գործադրելու փորձեր չկատարուին ապահովագրութեան ընկերութիւններուն կողմէ, մասնաւորապէս մրցակցութիւն գոյութիւն ունի անոնց միջեւ: Խորհուրդը նաեւ կը պատրաստէ համաձայնագիրներու օրինակ մը, որ պիտի օգտագործուի ներքին գործոց նախարարութեան համաձայնութիւնը ստանալէ ետք:

Ներքին ապահովագրութեան ուժերը տակաւին չսկսած ստուգելու բոլոր ինքնաշարժներուն ապահովագրութիւն ունենալը, որովհետեւ քաղաքացիները թէ՛ ժամանակը, թէ՛ անհրաժեշտ նիւթական շուկան անմիջականօրէն գործադրելու որոշումը: Անակնկալ անցարկներ չեն գետեղուիր որոշումը չգործադրողները «որսալու» համար, որովհետեւ ներքին գործոց նախարարութիւնը հրամայած է առիթ տալ քաղաքացիներուն, որպէսզի ապահովագրութեան օրէնքը գործադրեն իրենց ինքնաշարժները արձանագրած եւ ինքնաշարժին մեքանիքը վճարած ատեն:

Բնականաբար որոշումին գործադրութեան հսկող ուժեր որոշ ատեն մը ետք պիտի անցնին գործի լիբանանեան գանձան շրջաններու մէջ, որպէսզի ստուգեն, թէ բոլոր ինքնաշարժները անխտիր կը կրնան ապահովագրութիւններ եւ անոնց բոլոր փաստաթուղթերը օրինակա՞ն են: Այս աշխատանքը փաստօրէն բաւական երկար եւ հետեւողական հետապնդումի կը կարօտի, որովհետեւ այսօր Լիբանանի տարածքին շրջող ինքնաշարժներուն միայն 30 առ հարիւրը ապահովագրուած է: Ասկէ բացի որոշումի գործադրութեան առաջին տարուան ընթացքին, միջին քաղաքացիները ընտելանան որոշումին եւ անոր մասնաւորութիւններուն, որոշ գծաւորութիւններ պիտի ծագին եւ ապահովագրութեան ուժերն ու ինքնաշարժները արձանագրող կեդրոնի պաշտօնեաները դէմ յանդիման պիտի գտնուին նոր հարցերու եւ խնդրողոտներու:

Տնտեսական նախարարութեան գիտել տուած են, թէ պարտադիր ապահովագրութեան նոր օրէնքին եւ նախկին ապահովագրութիւններուն միջեւ տարբերութիւնը այն է, թէ նախորդը կրնար որոշ ընտրանքներ տալ յաճախողին եւ փոխարձակ համաձայնութիւն գոյացնել ապահովագրութեան ընկերութեան եւ ենթակառ միջեւ, սակայն նոր օրէնքը ինք կը սահմանէ նուազագոյն գումարը եւ ընտրելու լայն առիթ չի ձգեր երկու կողմերուն: Նախապէս եթէ որոշ գումարի մը փոխարէն ապահովագրութեան ընկերութիւնը միայն որոշ ծախս մը կը հոգար, նոր օրէնքով նուազագոյն ծախս սահմանը որոշուած է եւ կարելի չէ անկէ պակաս գումարներով համաձայնութիւն կնքել:

5 Ապրիլին Լիբանանի մէջ գործադրութեան գրուեցաւ ինքնաշարժներու պարտադիր ապահովագրութիւնը, եւ բոլոր ինքնաշարժ ունեցողներուն պարտաւորութիւնը դարձաւ ապահովագրութիւն ունենալ եւ օտարակեցի որոշումին գործնականացման եւ իրենց կացութիւնը օրինական դարձնել:

Ներքին գործոց նախարարութիւնը քաղաքացիներուն դիմել տուաւ, թէ հակառակ պարագային եւ որոշ ժամանակ ետք ապահովագրութիւն չունեցող ինքնաշարժներու տէրերուն հաշուոյն պիտի գործադրուին որոշուած տուգանքները, որոնք կը տարբերին 50 հազարէն երկու միլիոն Լ ոսկիի միջեւ, իսկ բանտարկութեան ժամանակաշրջանի երկուքէն 6 ամիս: Նախարարութիւնը դիմել տուաւ, որ եթէ ասով հանդերձ քաղաքացիները չեն թարկուին որոշումին եւ չգործադրեն գանձքը, տուգանքներն ու պատիժները պիտի աւելնան, եւ նախարարութիւնը այլ քայլերու պիտի դիմէ:

Այս որոշումով քաղաքացիներուն ուսերուն դրուած է նոր պարտաւորութիւն մը, որ անհրաժեշտ է երկու կողմերուն ապահովագրութեան եւ արկածի պարագային անհանդիման զէպքերու ու պարագաներուն առաջը առնելու եւ անհրաժեշտ օգնութիւնն ու դարմանումը ապահովելու համար:

Պատրաստեց ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ



ՄՆՆՊԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնայու Գաղտնիքները

ԿԻՆԸ ԵՒ ԱՆՈՐ ԿԵԱՆՔԻ ԶԱՆԱԶԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐԸ

Կինը իր կեանքին ընթացքին զանազան հանգրուաններէ կ'անցնի: Այս հանգրուաններուն պատճառով ֆիզիքական պրկուններ կ'ունենայ, որոնք երբեմն վտանգաւոր կը դառնան: Մարմնի այս փոփոխութիւնները պէտք ունին առողջ սննդականութեան մը, որ պիտի տեւէ կնոջ ամբողջ կեանքին ընթացքին: Առողջ սննդականութեան կարեւոր է ոչ միայն մարմինը գեղեցիկ պահելու համար, այլեւ՝ մարմինը առողջութեան, ծննդաբերութեան վտանգներու եւ ոսկրացաւերու նուազեցման:

միացնելու աճող ստորին: Պոլիմիալ կը յատկանշուի մեծ քանակութեամբ ճաշ ուտելով, ապա զանոնք դուրս տալով, իսկ անորքայիս յարատեւ վախն է ուտելիքէն: Այս բոլորը կ'ազդեն պարմանունհիւն հոգեբանութեան վրայ: Մնողները պէտք է ուշադրութիւն դարձնեն իրենց գաւակներուն սննդականութեան եւ սերտուած ու կանոնաւոր մարզանքներ կիրարկեն հասնելու համար փափաքած ծանրութեան:

ՍՆՈՒՆԳԻ ԳԼԵԱՒՈՐ ՏԱՐԵՐԸ

Մարմնի քալիթի մը 99 առ հարիւրը կը գտնուի ոսկորներուն եւ աղուաներուն մէջ: Աղջիկ մը օրական 1500 միլիկրամ սնունդի պէտք ունի: Այս տարիքին հասունութեան բոլորած հասակին գրեթէ 20,15 առ հարիւրը արդէն ամբողջացուած կ'ըլլայ, իսկ ծանրութեան՝ 50 առ հարիւրը: Տասնութ տարեկանին աղջկան մարմնի հիւսկէններուն մէջ գտնուող ճարպի քանակը գրեթէ յար ծանրութեան 30 առ հարիւրը կը կազմէ, որ շատ աւելի է այդ տարիքի քանակին: Այս է պատճառը, որ աղջկան մարմինը շատ աւելի քիչ ճարպ կ'առնէ, քան տղաները:

ԵՐԿԱԹ

Անոնք, որոնք երկար թի պակաս ունին իրենց մարմնին մէջ, զխացաւ, յոգնութիւն եւ պրկուածութիւն կ'ունենան: Այդ պատճառով իսկ անոնք պէտք է ուշադրութիւն դարձնեն իրենց սննդականութեան, մասնաւորաբար անոնք, որոնք բուսակեր են:

ԶԻՆԻՐ

Զինքը ամառն օգնող եւ հիւսկէններուն փրկութիւն հայտնաբերող գլխաւոր տարրերէն մէկն է: Զինք կարելի է գտնել հաւու եւ այլ միսի տեսակներու, կաթի եւ կաթնեղէններուն մէջ:

ԱՐՐՈՒՆՔԻ ՇՐՋԱՆԸ

Ըստ ուսումնասիրութիւններու, կնոջ աւելորդ ծանրութիւնը կրնայ ազդել բեղմնաւորման վրայ: Մնողները իրենց կարողութիւնը կրնայ նուազել, եթէ կնոջ մարմնին մկաններուն գումարը, որ հաւասար է անոր կշիռքին բազմապատկուած անոր հասակին մեթր քառակուսիին, աւելի է 27էն:

ՅՂԻ ԿԻՆԸ

Յղուութեան շրջանին պահանջուած ջերմութի քանակը կ'աւելնայ: Յղի կնոջ օրական պէտք ունի 2500 ջերմութի: Ան պէտք է օրական սպառէ նուազագոյնը 60 կրամ փրօթէին, երեքէն չորս անգամ կաթ եւ կաթնեղէնի տեսակներ, ինչպէս՝ գաւաթ մը կաթ կամ մածուն եւ կամ 50 կրամ պանիր: Անոր ստացած ջերմութի 50 առ հարիւրը կը կազմեն ինչպէս՝ պտուղները, բանջարեղէնները եւ ընտելեցնող: Իսկ ընթացքին նաեւ յղուութեան շրջանի անհրաժեշտ տարրերէն են: Անոնք աղիքները կը պաշտպանեն պնդութիւնէն: Բնական նաեւ այլ վտանգաւոր երեւոյթներ՝ պոլի-

ւած հացին, թուի բրինձի եւ այլ տեսակի ուտելիքներու մէջ: Գաղտնիքները, ըսենք, որ արդէն ջուրին մէջ կը գտնենք զայն: Զուրը խիստ անհրաժեշտ է յղութեան շրջանին: Ան մարմնին արեան քանակը կ'աւելցնէ եւ ջերմութիւնը կը հաւասարակառնէ, ինչպէս նաեւ աղիքներէն կը մաքրէ թուեւոր տարրերը: Յղի կնոջ օրական պէտք է խմէ նուազագոյնը տասը գաւաթ ջուր: Իսկ ոգելից բնակիչները, քաֆէինը եւ նիքոթինը երբեք պէտք չէ կնոջ մարմնին մէջ մտնեն յղութեան ինքնաշարժներուն ընթացքին:

Եթէ կին մը նիւար է, յղութեան շրջանին կրնայ 13 - 14 քիլոկրամ աւելնալ: Եթէ բնական ծանրութիւն ունի, կրնայ 10 - 12 քիլոկրամ աւելնալ: Իսկ եթէ դէր է, կրնայ աւելնալ 9 քիլոկրամ: Նախընտրելի է առաջին երեք ամիսներուն չաւելցնել ծանրութեան վրայ որեւէ քիլոկրամ: Զորորող ամիսէն սկսեալ շաքար կէս քիլոկրամ աւելնալը բաւարար է:

ՀԱՆՔԱՅԻՆՆԵՐԸ ԵՒ ՎԻԹԱՄԻՆՆԵՐԸ

Քալիթի անհրաժեշտ է: Ան կնոջ արեան ճնշումը կը հաւասարակառնէ: Ան անհրաժեշտ է նաեւ սաղմին ոսկորներուն ամրան համար: Քալիթը պարունակող յղի կնոջ պէտք ունի նաեւ քալիթի ղեղաճատները:

Փոլիքը անհրաժեշտ է յղութեանն առաջ եւ ետք: Այս տեսակի Պէ. կենսա-նիւթը կը նուազեցնէ ջրային գրուութեան հարցերը եւ կը հաւասարակառնէ սաղմին ծանրութիւնը: Յղի կնոջ օրական պէտք ունի 400 միքրոկրամ ֆոլիքի:

Յղի կնոջ մարմնին երկարութիւնը, կնոջ աւելորդ ծանրութիւնը կրնայ ազդել բեղմնաւորման վրայ: Մնողները իրենց կարողութիւնը կրնայ նուազել, եթէ կնոջ մարմնին մկաններուն գումարը, որ հաւասար է անոր կշիռքին բազմապատկուած անոր հասակին մեթր քառակուսիին, աւելի է 27էն:

Տէ. կենսա-նիւթը անհրաժեշտ է քալիթի իւրացման համար: Մարմինը կրնայ Տէ. կենսա-նիւթը արտադրել, եթէ արեան ճաւաղակներուն ենթարկուի: Կաթն ու կաթնեղէնները նոյնպէս կը պարունակեն Տէ. կենսա-նիւթը:

ԳԻՇՅՈՒՄԸ

Մասնակին համար ամէնէն լաւ կաթը մօր կաթն է: Ան շատ աւելի մարտողական է եւ դիմադրողականութիւնը կը բարձրացնէ: Ան նաեւ կը նուազեցնէ թոքերու եւ սրտի վնասները: Ան հաւանականութիւնը կը նվազեցնէ: Ան կը նուազեցնէ կնոջ կտրուածքի քաղցրութիւնը: Դիտելու կ'օգնէ

ՔԱՐԸ ԵԱՐՏԵԱՆ

Քարը՝ էջ 8



Կնոջական

ՓՈՐՁ ԸՆԴՑԱՐԱՍ

ՈՐՔԱՆՈ՞Վ ՅԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՏԵՐ ԱՆՉ ՄԸՆ ԷՔ

Բոլորիս մէջ ալ յարձակողական տրամադրութիւն մը պահուած է, բայց որքանով կը բացայայտենք կամ կը ծածկենք զայն...



1
Ընտրեցէք հետեւեալ անասուններէն մէկը
Ա.- Աքորը:
Բ.- Կատուն:
Գ.- Գետնառիւծը:

2
Երբ անդրադառնաք, որ սիրուած չէք
Ա.- Կտրուկ ոճ մը կ'որդեգրէք:
Բ.- Աւելի ազնիւ եւ ճկուն կը փորձէք ըլլալ:
Գ.- Կը քմծիծաղիք:

3
Երբ զայրանաք
Ա.- Կը կարմրիք:
Բ.- Դուք ձեզմէ կ'ելլէ լէք:
Գ.- Կը նախընտրէք լուել

4
Ճամբան մէկը կ'անարգէ ձեզ
Ա.- Կը փախչիք առանց պատասխանելու:
Բ.- Ամբողջ ուժով կը պոռաք:
Գ.- Կ'անտեսէք ու կ'անցնիք:

5
Ճաշարանին մէջ դժգոհ էք ուտելիքներէն եւ սպասարկողներէն
Ա.- Բարձրաձայն կը դժգոհիք:
Բ.- Ձեր սեղանակիցներուն կը դժգոհիք ցած ձայնով:
Գ.- Անգամ մըն ալ ոտք չէք կոխեր այդ ճաշարանը:

6
Թաղեցի պատիկ մը ձեր ինքնաշարժին ապակին կը կոտրէ:
Ա.- Կ'երթաք եւ ծնողքին կը գանգատիք:
Բ.- Ծնողքէն հատուցում կը պահանջէք:
Գ.- Դուք ձեզի կը զայրանաք, բայց կը լռէք:

7
Ձեր կարծիքով, կեանքի մէջ
Ա.- Պէտք է համբերատար ըլլալ:
Բ.- Պէտք է պայքարել գիտնալ:
Գ.- Փոխադարձել նոյն ոճով:

8
Ձեր կարծիքով բամբակաբույս
Ա.- Անխուսափելի է:
Բ.- Վատութիւն է:

Գ.- Սիրտ կը խառնէ:

9
Ձեր ամուսինը կամ ընկերը
Ա.- Շուտ «բռնկող» է:
Բ.- Շուտ նեղուող է:
Գ.- Քմահաճ է:

10
Շարժապատկերի մը մէջ կը փափաքիք խաղալ
Ա.- Կ'ընկալուիք յայտնի դերեր:
Բ.- Ռուսիոյ կատարին է Բ. ցարուհիին դերը:
Գ.- Լա Փոմփատուրի դերը:

11
Ձեր սիրած անձը պէտք է ըլլայ
Ա.- Գառնուկի պէս մեղմ:
Բ.- Հրամայող եւ իշխող:
Գ.- Ժայռի մը պէս տոկուն:

12
Երբ զայրացած էք
Ա.- Բարձրաձայն կը յայտարարէք, որպէսզի բոլորը լսեն:
Բ.- Կը խնդրէք, որ ոչ մէկը խօսի ձեզի հետ:
Գ.- Կ'առանձնանաք:

13
Ի՞նչ բան կը նեղացնէ ձեզ՝ ձեր սիրած անձին մօտ
Ա.- Գէշ միտումը:
Բ.- Կարծրութիւնը:
Գ.- Թուլութիւնը:

14
Յաճախ կ'ըսէք
Ա.- Իմ յանցանքս չէ:
Բ.- Քո՛ւ յանցանքդ է:
Գ.- Անկարելի է, որ սխալած ըլլամ:

15
Երբ որոշում մը պիտի տաք
Ա.- Ժամանակ կ'առնէք մտածելու:
Բ.- Ուշ կ'որոշէք:
Գ.- Կ'որոշէք՝ առանց հետեւանքներուն մասին մտածելու:

ՊԱՏԱՍԽԱՆ

	A	B	C
1	■	●	▲
2	■	▲	●
3	■	●	▲
4	●	■	▲
5	■	●	▲
6	▲	■	●
7	▲	■	●
8	▲	●	■
9	■	▲	●
10	●	■	▲
11	■	●	▲
12	■	●	▲
13	■	▲	●
14	▲	●	■
15	▲	●	■

□ Եթէ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը ■ է, նուազագոյն դեպք պատճառ կը բռնէք պոռթկալու համար... Այսպէս ուշացած նամակ մը, այրած կերակուր մը, կորսուած իր մը կը զայրացնեն ձեզ: Ձեր շուրջ բոլորը հաճախակի մատնուած են եւ կ'ուզեն ամէն գնով հանելի թուիլ եւ ձեզ հանդարտ պահել: Գործի մէջ, սակայն, շողորրոք չէք գիտեր, իրականութիւնը կ'ըսէք, նետուող էք եւ ի նպաստ հաւաքական շահին կ'աշխատիք:

Թելադրելի է, որ քիչ մը աւելի զուսպ ըլլաք, տեսաբար պոռթկացող եւ զայրացող անձերը շատ ալ սիրուած եւ գնահատուած չեն ընկերութեան մէջ:

□ Եթէ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը ● է, ամէն բան անհնարանի կ'առնէք, դուք ձեզ այս անարդար աշխարհին գոհը կը համարէք: Դուք ձեզ բոլոր տեսակի անարդարութիւններու թիրախ կը նկատէք: Պէտք է անդրադառնաք, որ տեսաբար քննադատուած, չսիրուած զգալու այս երեւոյթը անտանելի է, ջանացէք հարցերը երկու կողմէն դիտել: Գառնուկի կեցածը ճշդ է:

□ Եթէ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը ▲ է, չէք վարձիր ձեր շրջապատին բեթեւ բնադատութիւններ կատարելու, բայց միշտ ալ ձեր չափերը գիտէք եւ երբեք չէք վիրաւորեր: Ձեզ նշող կացութիւնները չէք անտեսեր, ընդհակառակը դեպի առաջ կը նետուիք եւ կը փորձէք հարցերը յստակացնել ու դժուարութիւնները հարթել:

Թեթեւ պոռթկումներ կ'ունենաք, բայց գիտէք ինքնագոյն զիմել եւ կացութիւններուն յարմարիլ:

ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

ՓԱՐՔԸ՝ ԳՈՐԾՆԱԿԱՆ, ՊԱՅՄԱՆԱԻ ՈՐ ԶԶԱՓԱԶԱՆՑԵՆՔ

Փարքը շատ գործնական է, կրնանք երեխան մէջը ձգել եւ հանգիստ մտքով մեր տան գործերը կատարել: Փարքին մէջ երեխան տարածութիւն ունի խաղալու, զբաղելու, հեռու՝ ամէն տեսակի վտանգներէ: Որպէսզի երեխան զայն սիրէ եւ որդեգրէ, անոր մէջ դրէք անվնաս խաղալիքներ, եւ ան երկար ժամանակ պիտի զբաղի...

ԱՊԱՅՎՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

- Փարքը հեռացուցէք վտանգաւոր իրերէ եւ զեղօրներէ, զորս երեխան կրնայ ձեռնել մատներուն վրայ բարձրանալով:
- Նոյնը եւ տեղ գրաւող խաղալիքներով (արջուկ, բարձ...) մի՛ խնդրէք փարքը, որպէսզի երեխային տեղը չնեղնայ եւ դուրս ելլելու փափաք չունենայ:
- Նոյնիսկ եթէ երեխան պաշտպանուած է բոլոր տեսակի վտանգներէն, թելադրելի է, որ միշտ աչք մը նետենք եւ մեր հսկողութեան տակ առնենք զինք:



ՈՉ ՊԱՏԻՑ, ՈՉ ԼՔՈՒՄ

Ուշադիր ըլլանք, փարքը կրնայ մեկուսացնել երեխան, ինչ որ սխալ է, պէտք է յաճախ խօսիլ անոր հետ, երգել անոր համար, որպէսզի կապը չխզուի:
Ձայնասփիւռն ու պատկերապիւրը երբեք չեն փոխարիներ մօր մը քաղցր ձայնը:
Եթէ երեխան երկար ատեն բանտարկուած մնայ, անոր մտային եւ ֆիզիքական յառաջդիմութիւնը կը սանձուի, քանի որ երեխան կարիք ունի զինք շրջապատող միջավայր «հետախուզելու» եւ տարբեր մարզերը հետ «յարաբերելու»: Ուրեմն երեխան կէս կամ երեք բառերով ժամէն աւելի փարքին մէջ պահելու ճիշդ չէ: Կարելի է զայն փարքին մէջ դնել օրական 3 - 4 անգամ, բայց ոչ՝ երկար ժամեր:

ԼՕԻՒ
«Ա. ՓԱՓԱՉԵԱՆ»
ՄԱՍՆԱՃԻՎ
ՃԱՇԻ ՊԱՉԱՐ

Ճաբաթ, 12 Ապրիլ 2003, Չալքայի «Գարեգին Նոյն» ակումբին մէջ, առաւօտեան ժամը 10:00ԵՍ սկսեալ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առնետրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենյակը:

ԱՅԼԱԶԱՆ

ԾԱՄՈՆ ԾԱՄԵԼԸ ՕԳՏԱԿԱՐ Է

Ճափոնական ուսումնասիրութեան մը համաձայն, ծամոն ծամելը կը նպաստէ արագ ապաքինումի՝ յատկապէս ստամոքսի վիրաբուժութեան պարագային: Այսպէս, նկատուած է, որ անոնք, որոնք օրական երեք անգամ ծամոն կը ծամեն վիրաբուժութենէն ետք, շատ աւելի արագ վերականգնած են իրենց մարտողական դրութիւնը:

ՍՈՒՐՃԸ ՕԳՏԱԿԱՐ՝ ՇԱՔԱՐԱՆՏԱԻՈՐԻՆ

Հոլանտացի բժիշկներու մէկ ուսումնասիրութեան համաձայն, առտու կանուխ խմուած սուրճը կամ ճաշէն ետք խմուած քանի մը գաւաթ սուրճը կարելի էր ստիպուել շաքարը կը նուազեցնէ:
Արդարեւ, Ամսթերտամի համալսարանի բժշկապետ Ռոպ վան Տամի կարծիքով, ասիկա առաջին լուրջ ուսումնասիրութիւնն է, որ սուրճին օգտակարութիւնը ցոյց կու տայ շաքարախտի պարագային: Նշենք, որ աշխարհի տարածքին շուրջ 130 միլիոն մարդ կը տառապի շաքարախտէ:

ՉՈՒՐԸ ՓՈՐ ԶՊՈՒԵՑՆԵՐ

Չուրը աստուածային բարիք մըն է մարդ արարածին համար: Ան զուրկ է ջերմութէ եւ ոչ մէկ ժխտական անդրադարձ կամ հետեւանք կ'ունենայ մեր առողջութեան վրայ, նոյնիսկ՝ չափազանցելու պարագային:
Առատ ջուր խմելը կը նպաստէ նիւթանայուն, այն իմաստով, որ մէկը ճամբով մարմնէն կ'արտաքսուին թունաւոր նիւթերն ու ճարպերը, մինչդեռ քիչ ջուր խմողներուն մօտ իւրեքը կը կուտակուին մարմնին մէջ, իսկ միւս կողմէ՝ անոնց երկվամբերը լաւ ձեւով չեն գործեր:
Միայն է նաեւ այն կարծիքը, որ ջուրը փորը կ'ուռնեցնէ: Բժիշկները խիստ կերպով կը թելադրեն կիններուն առտուն երկու բաժակ ջուր խմել, նոյնպէս ալ՝ կէսօրին եւ իրիկունը: Անոնք նաեւ կը թելադրեն ջուրը խմել պարզապէս փորով եւ ոչ ճաշի ընթացքին, քանի որ վերջինին պարագային ստամոքսը կ'ընդլայնի եւ պատճառ կը դառնայ, որ ժամանակի ընթացքին իւրը կուտակուի փորին մէջ:

ԽՈՂԱԳԻՐ

ՈՂՈՐՈՒՄԾ ՍՄԲՈՒԿՆԵՐ



- Բաղադրութիւն՝ 4 անձի համար.
- 2 սմբուկ
 - 2 դրում
 - 2 կարմիր պղպեղ
 - կապոց մը ռեհան
 - 3 ապուրի դգալ ձէթ
 - 1 ապուրի դգալ քացախ
 - Աղ, սեւ փոշի պղպեղ
 - Պատրաստութիւն
- Պղպեղները փուռին մէջ 15 վայրկեան խորովել, կեղուել, ապա լայն երիզներու ձեւով կտրել: Զանոնք փոխադրել կէս խորունկ ամանի մը մէջ եւ քացախը աւելցնել:
Մըրուկներն ու դրումները եւս երկվայրկեան շերտով Գրումի շերտերն ու ռեհանի տերեւները 1 վայրկեան եռացած ջուրի մէջ, խաշել, ապա պաղ ջուրի տակ ռուսել եւ ցամբեցնել:
Մըրուկները տաք ձէթին մէջ տապակել եւ ծծուն թուղթի վրայ փոխադրել, ապա աղել եւ համեմել: Առանկ շերտ մը սմբուկ վրան դնել շերտ մը դրում, վրան շերտ մը կարմիր պղպեղ, վրան՝ քանի մը տերեւ ռեհան: Բոլորը զգուշօրէն ոլորել եւ փայտեայ ցպիկով մը հաստատել:

Ոլորուած բանջարեղէնները առնուազն 4 ժամ սառնարանը պահել, հրամցնելու ժամանակ երեսը զարդարել 5 երկվայրկեան տաք ձէթի մէջ տապակուած ազատեղով կամ ռեհանով, որ անմիջապէս ծծուն թուղթի վրայ փոխադրած եւ ապա աղած ըլլաք:
Այս բանջարեղէնները կարելի է հրամցնել իբրեւ աղանդեր, խմիչքին կողքին, կամ՝ իբրեւ պաղ «անթրէ»: Բարի՛ ախորժակ:

Պատրաստեց՝
ՇՈՒՇԻԿ ՍԱԻՍԱԳԱԼԵԱՆ

www.aztagdaily.com

www.hamazkayin.com

«ԱՉԳԱԿ»-Ի ՀԵՌՈՒՄՅԱՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱՉԳԱԿ»-Ի ճետ կապուելու համար ճետաձայնել
ճետաձայն թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

